ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆՔ

ՈՐԲԻՆԵՐԸ

Զրաարթ օրերն անցան, տառեր են դաշտեր.
Լքեալ տնամկին բիւր ափսոս.
Անոր սպասէ շիրմին փոս.
Դաշտերու պէս սառը սրրտերն է պատեր։

Ամանորին գիշերն էր այն առաջին,
Ամրոխմ՝ օրուան հանդէսներէն դառնալով
Կը փութար տուն բերկրանքով։
Երշանկութեան կաթ մ՝այցէր նոյն խակ հիւղին։
Նըստած մատրան մը սեմով
Երկու աղջայ, կէս մերկ, վըշտէն տըժգունած
Խեղճ թափէին խուլ, անասարբեր անցորդաց
Տըխուր վէպեր հառչելով։

Լապտեր մ՝անոնց ոտքն աղէտքնին կը պայծէր՝
Իբրեւ անոնց փաստաբանն։
Կըրտսերն՝ ի դող, արտասուազին կը նուագէր,
Կը կարկառէր միսմ՝ աչն անգութ մեծատան։

« Մենք աւասիկ երկու տղայք, չունինք մայր,
» Երէկ մեռաւ ամ տալով իւր հացը մեզ։
» Կը ընդնէ հոմ՝ ուր մեր հայր։
» Եկէք, տոված մենք կը մեռնինք ցըրտակէզ։

» Օտարն ըսաւ. — Գացէք, ունիմ ընտանիք։
» Ուրիշ մ՝ըզծեզ թող հոգայ։ —
» Տեսանք կու լար իւր գլստրիկ,
» Բայց կը մեռնինք մենք ահա »։

Եւ յուզիչ ձայնն ողբանուէր
Խուլ ճիչերով կոծէր զոդ։
Ամրոխմ՝ անոնց ամրտադիր՝ կը շտապէր.
Մինչեւ չլսնաց մարդ անցորդ։

Կը բախէին սուրբ դրրան,
Չի մայրերնին կ՝ըսէր թ՝Աստուած չի մոռնար։
Լոկ արձագանգն անոնց կու տար պատասխան.
Լոկ ինքը մաղը կու գար։

Լապտերը դեռ կը պըլպլար.
Տըխուր շեշտով ժամն զարկաւ կէս գիշեր։
Հեռուն տօնի կառքի մ՝աղմուկը լըսուէր,
Բայց ողրի ձայնն ալ չէր գար։

Միւս առտուն մի քահանայ
Կ՝ուղղէր դէպ այն աղոթատունն իր քայլեր,
Ու տեսնելով զանոնք ծեռն մէջ, քարին վրայ
Պառկած՝ կանչէ լալով... անոնք չեն ելեր։

Խեղճ փոքրիկներ, ո՜հ, զըրկէին մէկըզմէկ,
Որ չերմութեանն անշուշտ պահեն խուն ոնչխար։
Եւ քարացած այն դալկահար ամոլն հէք
Դեռ կարկառէր ծեռքը սառ։

Մեծն իր մարմնով կիսովի միսը ծածկէր,
Տանելով ծեռքն անոր սառած շրթներուն։
Արգիլելու կարծես անպէտ աղոթքներ,
Եւ ցուցնելու թէ ալ չըկար գըթութիւն։

Նընչեն ընդ միտ, և դեռ լապտերն հոն հրսկէ.
Մարդիկ կ՝ողբան, գիտեն ողբալ քանի թէ տալ։
Արցունքն ամէն կողմէ անոնց կը յորդէ,
Բայց եւէկ չէր գալ մէկն ալ։

Թրգ. Հ. Ա. Դ.ԱՋԻԿԵԱՆ Լ. ՊԵԼՄՈՆԴԵ։

ՈՐԲՈՒՀԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱՍԱՆ ՆՐԳ ՊՈՀԵՄՆԵՐՈՒ

Դեռ չըկար ամ երկու տարու՝ խեղճ պըզտիկ,
Մեռաւ մաման ու ամ մընաց միայնիկ.

Բայց մեծնալով քըչիկ մը հէք որբուհին,
Կը զգայ կարօտը սիրելի մամային։

Կը հարցընէ. « Ո՞ւր է արդեօք իմ մաման,
Հայրիկ, գիտես անշուշտ, ինծ տուր պատասխան »։

« Կը քընանայ ու 'սի քնանայ քու մաման,
Եւ քուէն ոչ ոք արթընցնէ պիտի ան։

Հանգիստ կ՝առնէ քու մաման հոն սուրբ դաշտին
Մէջ՝ վանդակէն երկու երեք քայլ անդին »։

Հօրը խօսքերը լըսելով որբուհին,
Շուտ կը վազէ սուրբ դաշտին իր մամային։

Հողը փորէ գընդասեղին ծայրիկով
Ու կը պարպէ ու կը պարպէ մատիկով։

Եւ բաւական փորելէն ետքը՝ յանկարծ
Խեղճ որբուհին կը փընտրընէ մի սեծ լաց։

« Հոս քովը եմ, չե՞ս լըսեր ինծ, ամ, մայրիկ,
Ըսէ ինծի, ըսէ գոնէ մի բառիկ »։

« Ա՜յ իմ ծագուկըս, խօսիլ չեմ կարող ես,
Վրրաս դեռ շատ հող կայ, դուն ալ կը տեսնես։

Սընտին վրրայ մեծ քար մ՝ունի քու մաման,
Եւ քարը գինքն այրէ բոցի մը նըման։

Դարձիր, ամուշ զաւակըս, շուտ տուն դարձիր,
Հոն քեզ ուրիշ մայր մը ապասէ գընթալիր »։

digitised by A.R.A.R.@